## Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978-1988 թթ. սովորել է Երևանի № 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Մտեփանոս Նախավկայի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. մայիսին ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ ավարտաճառ պաշտպանելով «Խոսրով եպիսկոպոս Անձևացի» (կենսագրական գծեր) և «Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ» (ընագիրն ու աստվածաբանությունը) թեմայով, և արժանացել «գերազանց» գնահատականի:

1995 թ. հուլիսի 23-ին, Պայծառակերպության տոնին, ձեռամբ Երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996-1998 թթ. եղել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր:

Այս ընթացքում Եկեղեցական երաժշտություն, Հայրաբանություն, Ընդհանուր Եկեղեցական պատմություն և Նոր Կտակարանի մեկնություն առարկաներն է դասավանդել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում և ՔԴՔԿ-ի ուսուցչաց լսարաններում:

1998 թ. Գարեգին Ա Հայրապետի տնօրինությամբ մեկնել է Անգլիա՝ սովորելու Լիոնի Համալսարանում և Մրֆիլդի Ս. Հարության քոլեջում, միաժամանակ լինելով և հովիվը Մանչեստրի հայ համայնքի Սուրբ Երրորդություն եկեղեցու:

2000 թ. ավարտելով ուսումնառությունը Անգլիայում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին և նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ, ուր դասավանդում է նաև Եկեղեցական երաժշտություն, Ս. Պողոս առաքյալի աստվածաբանությունը և Ս. Հովհաննես ավետարանչի աստվածաբանությունը առարկաները:

2002 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, Վազգենյան Դպրանոցի տեսչի պարտականություններին զուգահեռ, նշանակվել է Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի խորհրդի նախագահ:

2002 թ. մարտի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Օծումն հիվանդաց խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում» (Պատմությունը, գործադրությունը, վարդապետությունը և բնագիրը) թեմայով: